# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎ (0281) 6-00-01


16.հուլիս.2013թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ №13

**ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արենիի համայնքի ավագանու 16 հուլիսի թիվ 4 նիստի օրակարգը

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Արենի համայնքի ղեկավարի՝ բյուջեի կատարման 2013թվականի առաջին և երկրորդ եռամսյակների հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին
3. Արենի համայնքի համայնքային սեփականության հողերը վարձակալությամբ հատկացնելու մասին
4. Համայնքի տարեկան բյուջեում հոդվածային փոփոխություն կատարելու մասին
5. Արենիի համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Ս. Գրիգորյան | [signature] | ______ | ______ |
| 2. Հ. Նազարյան | [signature] | ______ | ______ |
| 3. Ա. Ծատուրյան | [signature] | ______ | ______ |
| 4. Ա. Հայրապետյան | [signature] | ______ | ______ |

Արենիի համայնքի ղեկավար՝ ________ Ս. Մուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎ (0281) 6-00-01

**16.հուլիս.2013թ.**

# ՈՐՈՇՈՒՄ №14

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2013Թ. 1-ԻՆ և 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Բյուջեի կատարման մասին 1-ին և 2-րդ եռամսյակի հաղորդումը ընդունել ի գիտություն՝

ա/ մուտքային մասով – 14397,4 հազար դրամ կամ 103,4 %

սեփական մուտքեր – 2006.0 հազար դրամ կամ 126.1%

բ/ ծախսային մասով – 23913,9 հազար դրամ կամ 93 %

Կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Մ. Գրիգորյան | [signature] | | |
| 2. Հ. Նազարյան | [signature] | | |
| 3. Ա. Ծատուրյան | [signature] | | |
| 4. Ա. Հայրապետյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար՝ [signature] Ա. Սուքիասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
## ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎ (0281) 6-00-01


**16.հուլիս.2013թ.**

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ №15

<u>ԱՐԵՆԻ ՅԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՂԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:</u>

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Տալ համաձայնություն Արենիի համայնքի սեփականություն համարվողգյուղատնտեսական նշանակության հողերից վարձակալությամբ մրցույթային կարգով, 5 տարի ժամկետով, տրամադրելու գյուղատնտեսական նպատակով օգտագործման:

<u>Մեկ հեկտարի մեկնարկային գինը սահմանել՝</u>

1. Ջրովի վարելահողեր.
   2-րդ կարգ-14.000 (տասնչորս հազար) դրամ
   3-րդ կարգ-11.500 ( տասնմեկ հազար հինգ հարյուր) դրամ
   4-րդ կարգ-7000 (յոթ հազար) դրամ
   5-րդ կարգ-3000 (երեք հազար) դրամ
2. Անջրդի վարելահողեր.
   4-րդ կարգ 3500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ
   5-րդ կարգ 2500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ
3. Արոտներ
   5-րդ կարգ 1000 (հազար) դրամ
4. Այլ հողատեսքեր 1000 (հազար) դրամ

Կողմ՝ 4 , դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Մ. Գրիգորյան | [signature] | ______ | ______ |
| 2. Հ. Նազարյան | [signature] | ______ | ______ |
| 3. Ա. Ծատուրյան | [signature] | ______ | ______ |
| 4. Ա. Հայրապետյան | [signature] | ______ | ______ |

Արենիի համայնքի ղեկավար՝ [signature] Ա. Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎ (0281) 6-00-01

16.հուլիս.2013թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ №16

**ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Տալ համաձայնություն՝ համայնքի 2013 թ. տարեկան բյուջեի վարչական մասի՝

1. Տեղեկատվության ձեռք բերում ոլորտի 08 բաժնի, 03 խմբի 03 դասի 4234 (Տեղեկատվական ծառայություններ) հոդվածից պակասեցնել 400.000(չորս հարյուր հազար) դրամ և այն համապատասխանաբար ուղղել ընդհանուր բնույթի այլ ծառայություններ ոլորտի 01 բաժնի, 03 խմբի, 03 դասի 4232 (համակարգչային ծառայություններ) հոդվածին:
2. Ոռոգում ոլորտի 04 բաժնի, 02 խմբի, 04 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 400.000(չորս հարյուր հազար) դրամ և այն համապատասխանաբար ուղղել ճանապարհային տրանսպորտ ոլորտի 04 բաժնի, 05 խմբի, 01 դասի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Մ. Գրիգորյան | [signature] | | |
| 2. Հ. Նազարյան | [signature] | | |
| 3. Ա. Ծատուրյան | [signature] | | |
| 4. Ա. Հայրապետյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար՝ [signature] Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Արենի ☎ (0281) 6-00-01


16.հուլիս.2013թ.

# ՈՐՈՇՈՒՄ №17

## ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Ընտանեկան օրենսգրքի» օրենքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արենիի համայնքում ստեղծել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով:
2. Հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Եղյա Գրիգորյան | գյուղապետի տեղակալ, | հանձնաժողովի նախագահ |
| 2. | Գևորգ Սիմոնյան | աշխատակազմի քարտուղար, | հանձնաժողովի քարտուղար |
| 3. | Վարդան Նահապետյան | իրավաբան, | հանձնաժողովի անդամ |
| 4. | Սպարտակ Ավետիսյան | ՄԾՏԳ գլխավոր-մասնագետ, | հանձնաժողովի անդամ |
| 5. | Աստղուր Մկրտչյան | բժիշկ, | հանձնաժողովի անդամ |
| 6. | Արմինե Կարապետյան | մանկավարժ | հանձնաժողովի անդամ |
| 7. | Բելլա Կարապետյան | մանկավարժ, | հանձնաժողովի անդամ |

3. Ուժը կորցրած ճանաչել Արենիի համայնքի ավագանու 14.04.2011թ. թիվ 18 որոշումը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1. Մ. Գրիգորյան | [signature] | | |
| 2. Հ. Նազարյան | [signature] | | |
| 3. Ա. Ծատուրյան | [signature] | | |
| 4. Ա. Հայրապետյան | [signature] | | |

Արենիի համայնքի ղեկավար՝ [signature] Ս. Մուրադյան